Նաիրյան վոկալ անսամբլը ստեղծվել է 2015 թ. -ին «Մուղդուսյան» արվեստի կենտրոնի մշակութային ծրագրերի շրջանակներում:

Նման անսամբլ ձեւավորելու հիմքում եղել է հայ դասական կոմպոզիտորների ստեղծագործությունների հանրահռչակման միտումը, ազգային դասական, հոգեւոր և ավանդական երաժշտության տարածումը, ինչպես նաև կանանց հզորացումը:

Անսամբլի կազմում երգում են երիտասարդ, պրոֆեսիոնալ կին երաժիշտներ: Խումբը երգում է *բազմաձայն երգեր,* հիմնականում ակապելլայի ձեւչափով, կան կատարումներ, որոնք նվագակցվում են կլարնետով, դափով, երաժշտական այլ գործիքներով, որոնց տիրապետում են աղջիկները:

Անսամբլն ունեցել է բազմաթիվ մենահամերգներ, տասնյակ ելույթներ տարբեր միջոցառումների շրջանակներում, այդ թվում՝ Երեւանի գրեթե բոլոր թանգարաններում, հոգեւոր կենտրոններում, տուն-ինտերնատներում, քրեակատարողական հիմնարկներում՝ հավատալով, որ երաժշտության հասանելիությունը ամենուր հնարավոր է՝ անգամ այնպիսի վայրերում, որտեղ դա սովորական երեւույթ կարող է եւ չընկալվել:

2018 թվականից անսամբլն իրականացնում է ներառական, իր տեսակի մեջ միակը ներկայացնող նախագիծ. բազմաձայն ստեղծագործությունների կատարմանը զուգահեռ՝ թարգմանելով երգը ժեստերի լեզվով: Ներկայումս ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ տարածաշրջանում, «Նաիրյան» վոկալ անսամբլը միակն է, որ երգում է ակապելլա, բազմաձայն ստեղծագործություններ՝ միաժամանակ վերածանելով այն ժեստերի լեզվով՝ այդ կերպ հասանելի դառնալով լսողության խանգարումներ ունեցող անձանց համար:

«Նաիրյան» վոկալ անսամբլը մասնակցել է ներհայաստանյան և միջազգային մի շարք փառատոնների՝ արժանանալով մրցանակների:

Համերգային ծրագրով անսամբլը եղել է Եգիպտոսում՝ Կահիրեում:

«Նաիրյան» վոկալ անսաբլի գեղ.ղեկավարը Նաիրա Մուղդուսյանն է:

Անսամբլում երգում են Թինա Ասատրյանը, Ելենա Ազարյանը, ԱՆնա Մինասյանը և Ելենա Ազարյանը: